48 Մի՛ թողուր զիս, ո՛վ Աստվածս,

1. Մի՛ թողուր զիս, ո՛վ Աստվածս,
Թող Քեզմե չմոլորիմ,
Ուժովցուր, Տե՛ր, իմ քայլվածքս,
Եթե ոչ՝ ես կընկղմիմ:
Պահպանե զիս, պաշտպանե զիս,
Որ երբեք չկորսվիմ:

2. Աշխարհիս անթիվ հոգերը
Կարգիլեն զիս, Տե՛ր, Քեզմե,
Սատանան իր հրապույրները
Իմ առջևս կդնե,
Վարմերովը, նենգերովը
Թող զիս չմոլորեցնե:

3. Ո՛վ Հիսուս, ցրե՛ վախերս,
Քո խոստումդ է հաստատուն,
Դուն կրնաս ներել մեղքերս,
Զիս լսել տուր ձայնդ սիրուն,
Դուն ես լույսս, Դուն ես հույսս
Միմիայն, Փրկիչս, Դուն:

4. Ո՛հ, թե ես սիրույդ ուժովը,
Տեր Հիսուս, Քեզի ձգվիմ,
Ինձ օգնե հոգվույդ շնորհքովը
Աշխարհես հրաժարվիմ,
Տե՛ր, կանչե զիս ու քաշե զիս,
Ես ալ պիտի հետևիմ:

5. Իմ ներքին սենյակիս մեջը
Դուռը ետևես գոցեմ
Ու սրտիս անկեղծ աղերսը
Աստուծոյս մատուցանեմ,
Արարիչս և Փրկիչս,
Առանձին տեղ թող գտնեմ: